

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N 33 ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2021/2**

ք.Երևան

«29» հունիսի 2021թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արտոլիանշին» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Մ. Խաչատրյանի (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՒՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Կոմիտասի պողոտայի թիվ 35 հասցեում գտնվող վարչական շենքի կիսանկուղային հարկի տարածքում ճաշարանի վերակառուցման աշխատանքները (այսուհետև՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 112 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ գնել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (Էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնստրուկցիայի անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնստրուկցիայի անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 2.1 Հավելվածում:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.11 Ստանձնում է Պայմանագրի կատարման շրջանակում կապալի օբյեկտների շինարարության որակի տեխնիկական հսկողության պարտավորությունների կատարման գործառնությունները, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ՝ այդ թվում նաև ՀՀ կառավարության 02.07.2012թ. թիվ 775-Ն որոշմամբ հաստատված կարգի V բաժնով՝ Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում՝ Համաձայն Հավելված 2.2-ի:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ Էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է Էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում Էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառու և պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

- 1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողովի ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:
- 2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:
- 3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:
- 4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝ ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն, բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:
- 5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 24 000 000 (քսանչորս միլիոն) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 8.15 կետով կնքվելից համաձայնագրով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է սույն ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև սույն տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (գրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (գրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով:³¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

³¹ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի կետերով սահմանված կարգով հաստատվելով և սույն համաձայնագրի գնի նկատմամբ, որի

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (գրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՅԱՂԹԱՅԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:³³

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:³⁴

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (ինսյուրություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ Նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 25 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 2.1, N 2.2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
900011030526
02647057

Էդգար Գևորգյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Արտդիանշին» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արարատ,
Գրիբայեռովի 24
Բանկ՝ «Հայֆինգնեսթանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150000527187135
ՀՎՀՀ 04112378
Միքայել հայապետյան

/ստորագրություն/

Կ.Տ.



ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՅԱՇԻՎ

ՀՀ Երևան քաղաքի Կոմիտաս պողոտա թիվ 35 հասցեում գտնվող ՀՀ ՊԵԿ վարչական շենքի կիսանկուղային հարկի տարածքում ճաշարանի վերակառուցման աշխատանքների

Հ/հ	Աշխատանքների անվանումը	Չավան միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը (ՀՀ դրամ)
1	2	3	4	5	6
	Բաժին 1 Ընդհանուր շինարարական աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ				
1	Խարամաբետոնե սալերից միջնորմային պատերի քանդում $\delta=100$ մմ	մ ²	74	500	37 000
2	Խարամաբետոնե սալերից միջնորմային պատերի քանդում $\delta=100$ մմ բացվածքների իրականացման համար	մ ²	2,88	500	1 440
3	Պատերի գաջի սվաղի քանդում ներկանյութի, պաստառի հետ միասին	մ ²	426,8	400	170 720
4	Պատերի ցեմ.ավազային շաղախի քանդում հախճասալի տակ	մ ²	5,5	600	3 300
5	Հախճասալի քանդում	մ ²	5,5	500	2 750
6	Շեպերի գաջի սվաղի քանդում	մ ²	7,4	300	2 220
7	Օդափոխության խողովակների ապամոնտաժում	մ	40	300	12 000
8	Օդափոխության խողովակների ապամոնտաժման համար վիշկայի վարձակալում	ժամ	4	19 000	76 000
9	Խոհանոցային կահույքի ապամոնտաժում 5600x600x800, հանձնում տնօրինությանը	հատ	1	15 000	15 000
10	Գիպսաստվարաթղթե սալով փակած բացվածքի բացում	մ ²	0,65	500	325
11	Առաստաղի գաջի քսահարթման քանդում ներկանյութի հետ միասին	մ ²	131,6	400	52 640
12	Մանրահատակի քանդում	մ ²	46	600	27 600
13	Լինոլեումե հատակի քանդում	մ ²	34	400	13 600
14	Լամինատե հատակի քանդում	մ ²	63,7	580	36 946
15	Փայտատաշեղային սալերով երեսապատման քանդում	մ ²	20	500	10 000

17	Պլաստիկե շրիշակների ապամոնտաժում h=50սմ	մ	68	200	13 600
18	Մետ.պլաստե դռների ապամոնտաժում շեպերի քանդումով, վերադարձվող	մ ²	12,69	800	10 152
19	Փայտե պատուհանների, պատուհանագոգերի ապամոնտաժում շեպերի քանդումով	մ ²	2,1	800	1 680
20	Մետաղական ճաղաշարի ապամոնտաժում	մ ²	1,62	600	972
21	Շին աղբի բարձում և տեղափոխում 12կմ հեռավորության վրա	մ ³	40	3 600	144 000
Դռներ					
1	Ներքին մետաղապլաստե դռներ -խուլ երկփեղկանի -պրոֆիլի լայնքը ոչ պակաս 60մմ -պրոֆիլի խցերի քանակը ոչ պակաս 3 -Մետաղական միջուկի հաստությունը ոչ պակաս 1,2մմ -պրոֆիլի գույնը շագանակագույն,փայտե ֆակտուրայով -բացվող	մ ²	5,46	38 000	207 480
2	Ներքին մետաղապլաստե դռներ -խուլ միափեղկանի -պրոֆիլի լայնքը ոչ պակաս 60մմ -պրոֆիլի խցերի քանակը ոչ պակաս 3 -Մետաղական միջուկի հաստությունը ոչ պակաս 1,2մմ -պրոֆիլի գույնը շագանակագույն,փայտե ֆակտուրայով -բացվող	մ ²	6,09	38 000	231 420
3	Ներքին մետաղապլաստե դռներ -խուլ միափեղկանի -պրոֆիլի լայնքը ոչ պակաս 60մմ -պրոֆիլի խցերի քանակը ոչ պակաս 3 -Մետաղական միջուկի հաստությունը ոչ պակաս 1,2մմ -պրոֆիլի գույնը սպիտակ -բացվող	մ ²	3,36	38 000	127 680
4	Ներքին ՄԴՖ-ի դռներ -ապակեփաթեթը երկշերտ,միափեղկ -փաթեթի կտրվածքը 4մմx12մմx4մմ -փեղկի հաստությունը ոչ պակաս 40մմ -շրջանակը ջրակայուն շերտավոր փայտ -երեսապատման շերտը ՄԴՖ 0,6մմ -սպիտակ -բացվող, ճոճվող -փական գնդիկավոր -ստորին հատվածը չժանգոտվող պողպատ900*250*0,5մմ 2 հատ -առանց շեմի	մ ²	1,89	37 000	69 930
5	Երեսակալներ պլաստիկե 10*70	մ	32	1 200	38 400
Պատուհաններ					
1	Մետաղապլաստե պատուհաններ -ապակեփաթեթը երկշերտ -փաթեթի կտրվածքը 4մմx12մմx4մմ -պրոֆիլի լայնքը ոչ պակաս 60մմ -պրոֆիլի խցերի քանակը ոչ պակաս 4 -մետաղական միջուկի հաստությունը ոչ պակաս 1,2մմ	մ ²	2,1	31 000	65 100

	-պրոֆիլի լայնքը ոչ պակաս 60մմ -պրոֆիլի խցերի քանակը ոչ պակաս 4 -մետաղական միջուկի հաստությունը ոչ պակաս 1,2մմ -պրոֆիլի գույնը շագանակագույն փայտե ֆակտուրայով -չ բացվող				
3	Մետաղապլաստե պատուհաններ -ապակեփաթեթը միաշերտ -փաթեթի կտրվածքը 4մմ -պրոֆիլի լայնքը ոչ պակաս 60մմ -պրոֆիլի խցերի քանակը ոչ պակաս 3 -մետաղական միջուկի հաստությունը ոչ պակաս 1,2մմ -պրոֆիլի գույնը շագանակագույն փայտե ֆակտուրայով - բացվող	մ ²	0,81	31 000	25 110
4	Պլաստիկ պատուհանագոգերի (b=25սմ) արժեքը	մ	4,3	4 800	20 640
5	Արտաքին պատուհանագոգերի իրականացում բազալտե սալիկներով՝ h=20մմ	մ ²	0,45	21 000	9 450
6	Պատուհանների և դռների ջերմամեկուսացումը պահպանելու համար պարագծով տեղադրել խծուծի հյուսած պարան	մ	17,5	2 000	35 000
Ներքին հարդարման աշխատանքներ					
1	Պատերի կառուցում 100մմ հաստության խարամաբետոնե սալերով	մ ²	71	2 500	177 500
2	Բացվածքի շարում 100մմ հաստության խարամաբետոնե սալերով	մ ²	6	2 500	15 000
3	Պատերի սվաղում ցեմ/ավազային սվաղով	մ ²	400,3	1 800	720 540
4	Մետաղական ցանց սվաղի տակ Փ4Bp-I ք.50x100	մ ²	400,3	1 500	600 450
5	Պատերի քսահարթում գաջի շաղախով	մ ²	298	2 000	596 000
6	Պատերի սվաղի ծեփամածկում և ներկում լատեքսային ներկով	մ ²	125,5	2 100	263 550
7	Պատերի սվաղի ծեփամածկում և ներկում ակրիլային ներկով	մ ²	172,5	2 100	362 250
8	Պատերի երեսապատում հախճասալով , ամրացված սոսնձով 600x300	մ ²	102,4	8 500	870 400
9	Շեպերի սվաղում ց/ավազային շաղախով մինչև 150մմ հաստության 7,9մ ²	մ	52,7	2 600	137 020
10	Շեպերի սվաղումը գիպսոնիտե շաղախով	մ ²	6,6	3 000	19 800
11	Շեպերի սվաղի ծեփամածկում և ներկում լատեքսային ներկով	մ ²	3,8	2 200	8 360
12	Շեպերի սվաղի ծեփամածկում և ներկում ակրիլային ներկով	մ ²	2,8	2 200	6 160
13	Շեպերի երեսապատում հախճասալով ,ամրացված սոսնձով 600x300	մ ²	2,38	8 500	20 230
14	Առաստաղների քսահարթում գիպսոնիտե շաղախով	մ ²	84,1	3 000	252 300
15	Կախովի առաստաղ ծ= 9,5մմ գիպսաստվարաթղթից մետաղական կարկասի վրա	մ ²	48,5	3 000	145 500
	Գիպսակարտոնի մետաղական կարկաս և կարկասի ամրացման հարմարանքներ				
	Գիպսակարտոնի պրոֆիլ CD(մ)	գմ	155,2	300	46 560

	Թղթյա ժապավեն կարանների համար	մ	82,5	50	4 125
	Ձգաճոպան հանգույցով	հատ	63,1	300	18 930
	Կցորդիչ CD-ի համար	հատ	29,1	300	8 730
	Երկմակարդակ կցորդիչ CD-ի համար	հատ	112	300	33 600
	Ինքնապտուտակ K6/25	հատ	39	30	1 170
16	Պլաստիկ կախովի առաստաղի իրականացում	մ ²	4,2	4 600	19 320
17	պլաստիկ անկյունակ	մ	12,2	1 000	12 200
18	Փայտե չորսու 30*50մմ 2,1մ	մ ³	0,003	280 000	840
19	Առաստաղի սվաղի ծեփամածկում և ներկում լատեքսային ներկով	մ ²	66	2 200	145 200
20	Առաստաղի սվաղի ծեփամածկում և ներկում ակրիլային ներկով	մ ²	66,6	2 200	146 520
21	Միաձույլ ե/բետոնե բարավորների կառուցում B15 դասի բետոնով	մ ³	0,41	70 000	28 700
22	Ամրան Փ12 500c դասի	կգ	47,6	410	19 516
23	Ամրան Փ6A240C դասի	կգ	9,2	410	3 772
24	Ամրան Փ12 500c դասի միջնորմների ամրակցման համար	տ	0,205	410 000	84 050
25	Խարամաբլոկների ամրանավորված անցքերի մեջ բետոնի լցում B7,5 մակնիշի	մ ³	0,54	36 000	19 440
26	Էլաստիկ նյութ խնուծի հյուսած պարան թաթախված ցեմենտե շաղախով	մ	61,5	1 300	79 950
	Հատակներ				
1	Ջրամեկուսիչ շերտի պատրաստում բիտումի մաստիկա 2 շերտ	մ ²	37,3	2 100	78 330
2	Ցեմ/ավազային հարթեցնող շերտի իրականացում 42մմ հաստության, M150 մակնիշի շաղախով	մ ²	132,1	2 200	290 620
3	Մամլագրանիտե լավորակ սալերով հատակի իրականացում ամրանավորված սոսնձով փայլատ d=10մմ 600x600	մ ²	94,8	11 000	1 042 800
4	Մամլագրանիտե շրիշակների կառուցում ամրանավորված սոսնձով h=10սմ L=69,0	մ ²	6,9	21 000	144 900
5	Հատակների իրականացում լավորակ չսահող խեցեսալիկներով h=8մմ ամրացված սոսնձով 600x600	մ ²	37,3	9 000	335 700
6	Շեմքերում լատունե թերթի տեղադրում d=35մմ, ամրացում	մ	6,5	1 500	9 750
	Մետաղական ճաղաշար				
1	Մետաղական ճաղաշարի կառուցում և տեղադրում	տ	0,032	660 000	21 120
2	Ուղղանկյուն խողովակի արժեքը 40x20x2	մ	6,6	3 000	19 800
3	Ուղղանկյուն խողովակի արժեքը 20x20x2	մ	17,4	1 700	29 580
4	Անկյունակի արժեքը 32x32x3	մ	1	1 300	1 300
5	Մետաղական ճաղաշարի երկշերտ յուղաներկում	մ ²	5	1 800	9 000
	Պարակաշարեր				
1	Թերմոպլաստե պոլիվինիլքլորիդային եզրաշերտ b=18մմ Кромка b=18мм	մ	154,2	600	92 520
2	Երկկողմանի Լամինատ b=18մմ Двусторонний ламинат b=18мм	մ ²	32	5 200	166 400
	Ընդամենը 1-ին բաժնի	հազ. դր.			8 622 878
	Բաժին 2 Ներքին տաք և սառը ջրամատակարարման համակարգ				

2	Պոլիարոպիլենե խողովակ d=32x5,4 փորձարկումով, աղտահանումով, լվացումով	մ	20	2 300	46 000
3	Պոլիարոպիլենե խողովակ d=25x4,2 փորձարկումով, աղտահանումով, լվացումով	մ	12	2 200	26 400
4	Պոլիարոպիլենե խողովակ Φ 20x3,4 փորձարկումով, աղտահանումով, լվացումով	մ	50	1 800	90 000
5	Պոլիարոպիլենային խողովակների ձևավոր մասերի արժեքը d=20-32մմ	հատ	82	350	28 700
6	Փական d=25մմ	հատ	2	4 500	9 000
7	Փական d=20մմ	հատ	1	2 300	2 300
8	Փական d=15մմ	հատ	20	2 000	40 000
